

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱՆԱՅՔ ԱԼԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Հասարակության մեջ կնոջ դերի և տեղի խնդիրը բավական բարդ, բազմակողմ և խնդրահարույց հարց է: Անտիկ փիլիսոփա Պլատոնը կնոջը համարում է ստորին էակ, իսկ սերը կնոջ նկատմամբ՝ կենդանական զգացմունք՝ թելադրված միայն բազմանալու անհրաժեշտությամբ:¹ Ըստ Արիստոտելի՝ գոյություն ունի մարդու միայն մեկ տիպ՝ արական, իսկ կինը միայն բնական թերարժեքությունից տառապող էակ է:² Ժ.Ժ.Ռուսոն նույնպես իր «Էմիլ կամ դաստիարակության մասին» աշխատությունում հիմնական ուշադրությունը դարձնում է կնոջ ոչ թե քաղաքացիական, այլ «մասնավոր», այսինքն՝ գերազանցապես ընտանեկան առաքինությունների ձևավորմանը: Կնոջ կրթությունը պետք է նրան նախապատրաստի ընտանեկան կյանքին և երեխաների դաստիարակությանը, որով պայմանավորված էլ նա տեղ ունի միայն հասարակության կյանքի մասնավոր ոլորտում՝ ընտանիքում:³ Ըստ անգլիացի տեսաբաններ Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի՝ կինը ամուսնական պայմանագիր կնքելով և ամուսնանալով՝ ընտանիքում գրավում է ենթակա դեր, ուստի նա ենթակա վիճակում է նաև քաղաքացիական հասարակության մեջ:⁴ Լոկը հավասարությունը տարածում է կանանց՝ միայն կրթություն ստանալու իրավունքի և հասարակության կյանքի միայն մասնավոր ոլորտում մասնակցության վրա: Անգլիացի ֆեմինիստուհի Մերի Ուոլստոնքրաֆտը իր «Կանանց իրավունքների պաշտպանություն» աշխատության մեջ քննադատում է Ռուսոյին և այն մտածողներին, որոնք խոսելով երկու սեռերի հավա-

1 Платон, Сочинения, т. 3, ч.1, М., 1971.
 2 Аристотель, О возникновении животных, М.-Л. 1940.
 3 Ռուսո, Էմիլ կամ դաստիարակության մասին, 2-րդ մաս, Ե., 1962, էջ 10-11:
 4 Гоббс Т. Левиафан, Сочинения, т. 2, ч.1., гл. XX, , М., 1991. С. 154-163;
 Локк Дж. Мысли о воспитании, Сочинения, т. 3, ч.1, гл. 7, М.: Мысль, 1988., С. 306-317.

սար «բնույթի» մասին՝ միաժամանակ շեշտադրում են նրանց «կենսաբանական» տարբերությունները: Ըստ Ուոլստոնքրաֆտի՝ մարդկային արժանիքները համամարդկային բնույթ ունեն:⁵

Կնոջ հիմնախնդիրը գրավում է ոչ միայն փիլիսոփաների ուշադրությունը. այն ներկայումս տեղափոխվել է հանրաբանների, պատմաբանների, մարդաբանների, մշակութաբանների, իսկ վերջին տարիներին նաև՝ գրականագետների ուսումնասիրությունների ոլորտ: Կինը երկար ժամանակ եղել է գրականության ոչ թե օբյեկտը, այլ՝ սուբյեկտը: Մինչև 19-րդ դարը կնոջ աչքերով աշխարհի պատկերումը եղել է միայն շատ քիչ և շատ համարձակ կանանց նախաձեռնությունը, որոնք, իրենց համարձակության և կնոջ համար «անպատվաբեր» գրական գործունեություն ծավալելու համար, որպես կանոն, արժանացել են հասարակության պարսավանքին և լուրջ խնդիրներ ունեցել անձնական կյանքում: Իրավիճակը սկսում է փոխվել 19-20-րդ դարերում՝ նախ սուֆրաժիստական, ապա ֆեմինիստական շարժումների առաջին հաղթանակների հետ համընթաց: Կանայք ձեռք են բերում մարդկային գոյի ամենատարբեր ոլորտներում, այդ թվում՝ արվեստում ու գրականության մեջ իրենց խոսքը բարձրաձայնելու իրավունք: Բնական է, որ նրանք համամարդկային արժեքների համակարգ բերեցին իրենց սեփական, կանացի յուրատեսակ փորձը, փիլիսոփայությունը և աշխարհայացքը: Խոսելով կանանց արձակի առանձնահատկությունների մասին՝ կարելի է նշել տարբերակիչ այնպիսի գծեր, ինչպիսիք են աշխարհընկալման սուր հոգեբանական հիմքը, լեցուն և խորը զգացմունքայնությունը, տեքստերի հիմքում ընկած կնոջ անձնական տեսակետը՝ ավանդական համընդհանուր արժեքների վերաբերյալ (*սեր, արժանապատվություն, պարտք, մարդկային փոխհարաբերություններ, բնություն, տուն, ընտանիք և այլն*):

Կանացի փորձի և արժեհամակարգի մոդելի կարևորության ընդունումը, համամարդկային արժեքների հետ այդ մոդելի փոխհարաբերությունը և նմանատիպ այլ հարցեր այն հիմնավորումն է, առանց որի արդեն անհնար է պատկերացնել ժամանակակից արևմտաեվրոպական, ամերիկյան, և հայ մտավորական մշակույթը:

Արդի հայ գրականությունը բնորոշվում է իրենց ստեղծագործություններով գրականություն նոր գաղափարներ բերող անուններով՝ Ալիս Հովհաննիսյան, Նելլի Ծահնագարյան, Սուսաննա Հարությունյան,

5 Ուոլստոնքրաֆթ Մ., բերվում է ըստ ֆեմինիզմի տեսություն և պատմություն գրքից. Ե.1999, էջ 16:

Դիանա Համբարձումյան և այլք), որոնց արձակը, գրական արժեքայնության տեսակետից, գրականագետների կողմից արժանացել է տարաբնույթ տեսակետների: Ընդհանուր առմամբ ճշտորեն արված քննադատությունները երբեմն հասնում են ծայրահեղության, որովհետև ստվերում են նաև այն արժանիքները, նոր մոտեցումները, որ ստեղծվել են կյանքի նոր պայմանների թելադրանքով և որոնք ոչնչացրել են ավանդական հայացքները՝ կնոջ ստորադաս դերի, հնազանդության և ստրկամտության պատգամները՝ թեև իր ծայրահեղ դրսևորումներով, լեզվական գոեհիկ ձևերով ու արտահայտություններով:⁶

Ալիս Հովհաննիսյանը, իր ժամանակակից մյուս կին գրողների նման՝ գրականություն է բերում նոր գաղափարներ և նոր գեղագիտություն, որտեղ **բարին, հավերժը, ճշմարիտը, գեղեցիկը** հասկացությունների արժևորումը թույլ է տալիս պահպանել պատումի լավագույն ավանդույթները՝ նույնիսկ եթե դրանք ներկայացված են դուրսին ինչ արտասովոր դիտանկյունից:

«Օղակը փակվում է» վեպի հերոսները անանց վավերումն են տառապանքի և հույսի, անտարբերության և համապրման, որոնց կրողները Ամերիկայում ապրող ամենատարբեր ազգերի ներկայացուցիչներն են, և որոնց արարքների, խոհերի, ձախողումների և նվաճումների միջոցով հեղինակը ներկայացնում է իր կենսափիլիսոփայությունը: Վեպի հիմնական կոնֆլիկտը արժեքների միջև կոնֆլիկտն է. հեղինակը ներկայացնում է տարբեր քաղաքակրթություններ և ամուսնության, ընտանիքի, սիրո, երջանկության տարբեր մոդելներ ու տարբեր ընկալումներ՝ Քրիստինա-Սթեն, Ռոզ-Լյուբիմով-Ռոբին-Սեմյուել, Աննա-Հիսուս, Մաքրուհի-Լևոն, Լուիզա-Հակոբ, Էմմա-Սեդրիկ, և վերջապես՝ Քաթրին և Հայկ ընտանիքների միջոցով:

6 Օրինակ, բանաստեղծուհի, գրաքննադատ Նաիրա Համբարձումյանը կարծում է, որ «աշխարհը, որում ապրում են Ալիս Հովհաննիսյանի կերպարները՝ «մեծ» երեխայի երևակայությունների ու երազանքների փակ աշխարհն է, որը հատունանում է առօրեական ու կենցաղային ճնշումներով՝ ընդգծելով երազի ու իրականության անհամատեղելիությունն ու անհասանելիությունը՝ այն ուղղել փորձելու, սակայն հաղթահարել չկարողանալու ծիզերով» /տե՛ս Նաիրա Համբարձումյան, Մարգինալ արձակ <http://hraparak.am/?p=81409&l=am>

Եթե Նաիրա Համբարձումյանը տեսնում է միմիայն թերություններ, ապա այլ է գրականագետ Ժ. Քալանթարյանի կարծիքը, որն անդրադառնալով ժամանակակից արձակի հիմնախնդիրներին՝ նկատում է, որ արձակագիրների մի մասը նախկինի նման գերադասում են հնարավորինս մոտ լինել կենդանի իրականությանը, արտահայտել կյանքի բնական տարերքը /տե՛ս Ժենյա Քալանթարյան, «Ժամանակակից հայ արձակի վիճակն ու հիմնախնդիրները» (18/05/2014), «Գրական թերթ»/:

Հեղինակը փորձում է օտար ափերում՝ Ամերիկայում հայտնված իր հայրենակիցներին դիտարկել փոքր-ինչ անսովոր, ոչ ավանդական հայացքով: Այս վեպում հանդիպում ենք բնագրի մղումներին ենթակա կանանց բազում օրինակների, որոնք կրքի անհաղթահարելի ճանապարհին են հայտնվել՝ կամ նախնական բռնության ենթարկվելու, կամ անտեսված լինելու, կամ էլ իրենք իրենց հաղթել չկարողանալու պատճառով: Բարոյականության խնդիրները բխում են մարդաբանական, սոցիալական, հոգեբանական տարաբնույթ հիմքերից: Ինչպես հեղինակի շատ գործերում, այստեղ ևս գլխավոր հերոսը կին է, սակայն այլազգի՝ տարբեր ազգության պատկանող ընտանիքներին հոգեբանական ծառայություններ մատուցող ամերիկուհի Քաթրինը, որը դեպքերի ականատեսն է և անմիջական շարադրողը: Ժամանակակից գործնական կնոջ վարքագծում ավանդաբար ըմբռնված բարոյականությունը ամենավերջին տեղն է գրավում: Ամերիկուհի հոգեբանը ազատ է զգացմունքների խնդրում. նրան անծանոթ են բարոյականության պարտադրված օրենքները, ինչը բնորոշ է հայ հերոսուհիներին: Քաթրինը երբեք դժվարություն չի ունեցել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հետ սեռական կապի մեջ մտնելու խնդրում. «...նոր տղամարդ է ծանկել «բոսը», որը խտրություն չի դնում գույնի, տարիքի, մարմնի չափսերի մեջ»:⁷ Սակայն ընկերուհիներից մեկի՝ սևամորթ Սանդրայի հետ կապը չի վերածել սեռական կապի. Քեթը գնահատել է Սանդրայի ուժը, խելքը, գեղեցկությունը: Իր ունեցած փողը, հոր ծանոթությունները, հասարակական բարձր դիրքը երբեք իրեն չէին տվել Սանդրայի պահվածքի վեհությունը, շքեղությունը, և հենց Սանդրայի հետ ընկերության ընթացքում Քեթը մտածել է սովորում, զգում դատողության գերագույն հաճույքը: Հեղինակի համակրանքը կանացի այս տեսակի՝ Սանդրայի կողմն է, որը նաև աստվածաջնջյան տասը պատվիրաններով է առաջնորդվում, որոնք սանձում են սատանային, որ ամեն օր փորձում է բույն դնել մարդու հոգում՝ ածելով իր բազում ձվերը:

Կանանց կերպարների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Քրիստինա Գրոֆը, ոչ միայն որպես կին՝ կենսաբանական էակ, այլև անհատականություն՝ կին-գիտնական, որը չի ապրում միայն անձնական հետաքրքրություններով. «Քրիստինա Գրոֆը իսկական գանձ է ամուսնու համար. Ստասիկը, այսպես է անվանում նրան Քրիս-

7 Ալիս Հովհաննիսյան, «Օղակը փակվում է», Ե., «Նաիրի», 2003, էջ 37: Այսուհետ գրքից հղումների էջերը կներկայացվեն հոդվածի տեքստում:

տինան, կարծես, երբևէ չի էլ փորձել խախտել ամուսնական հավատարմության սահմանները: «Օվկիանոսային սեքս» արտահայտությունը Սթենը հենց իր ու Քրիստինայի համար է գտել» (էջ 21): «Ես ներմուծում եմ այս տերմինը,- գրում է Գրոֆը,- քանի որ գրականության մեջ չեմ գտել այս կարգի սեքսուալության համապատասխան անվանումը, ոչ էլ անգամ դրա նկարագրությունը: Նրա զարգացումը վերաբերում է տիեզերական միասնության ապրումին» (էջ 309-310):

Վեպի թերևս ամենաառեղծվածային կերպարներից է Քեթի մայրը՝ Ռոզին, որն ամուսնուց միայն արհամարհանք ու ծաղրուծանակ է վաստակել: Մոր հանդիպումը նախկին ոստիկան Ռոբիի հետ և ուշացած սերը նույնպես երջանկություն չի բերում կնոջը. որքան էլ ուժեղ է կիրքը՝ այն չի կապում սիրեկաններին: Ռոբին իրենց բաժանման մեջ մեղադրում է հայ հարևաններին, որոնք ամբողջովին հափշտակել էին Ռոզին, որն ամբողջ օրը տարված էր հայերի տանը կատարվող իրադարձություններով: Ռոզիի մոտ ուժեղացել է հայերի հետ նույնանալու ձգտումը, հայ ընտանիքը նորովի է իմաստավորել Ռոզիի կյանքը՝ նա հայ երեխաների հետ անգլերեն է պարապում, բլուզներ գործում նրանց համար, խաղում նրանց հետ: Սա շատ տարօրինակ էր մոր պահվածքում, քանզի Քեթը չէր հիշում, թե երեխա ժամանակ մայրը երբևէ իր հետ խաղացած լիներ: Երկրորդ կապը նույնպես խզելով՝ Ռոզին ի վերջո «հանգրվանում է» հայ տղամարդու գրկում, Գառնիում հողակտոր գնում դստեր համար և վերջնականապես «հայանում»:

Ուշագրավ է Հիսուս-Աննա զույգը. Գվատեմալայից եկած այս ընտանիքում ներկայանում է ամուսնու բռունցքների տակ տառապող, ֆիզիկական աշխատանքից հյուծված, բայց համբերատար, ներող ու սիրող կինը: Աննան անսահման խոնարհ է, ներողամիտ, նրա գլխին է իջնում գազազած ամուսնու բռունցքը, նա փորձել է փախչել ամուսնուց, բայց ամուսնու հանդեպ ունեցած անսահման սերը կրկին վերադարձրել է նրա մոտ: Հիսուսն էլ, ի տարբերություն վեպի մյուս հերոսների՝ սիրում է կնոջը:

Սարոյանական հերոսներին է հիշեցնում Ամերիկայում հանգրվան գտած՝ Մաքրուիի-Լևոն զույգը: Մաքրուիին Լևոնի հետ գյուղում է ծանոթացել. նա իր ֆրանսերենի ուսուցիչն է եղել: «Երբ եկանք էս քամբախ երկիրը,- ասում է Մաքրուիին՝ Ջակոբին ու Քեթին,- մեր երեսին նայող էլ չեղավ: Ու մի օր էլ ձեզ նման մատաղացու ոչխար առնելու համար ընկերուհուս հետ եկա էս գյուղը ու հասկացա, որ մեր տեղն էս ա» (էջ 58): Օտար ափերում հայտնված կինը, այդուհանդերձ, դժգոհ չէ

իր ձակատագրից, սակայն մտահոգված է՝ իրենք ամուսիններով ազգությանը հայ են, «բայց այ, երեխեքս, չգիտեմ, ինչ են» (էջ 57):

Վետաքրքրական է Ամերիկայում հանգրվան գտած չորրորդը՝ Լուիզա-Հակոբ զույգը: Սա մի գեղեցիկ ավանդապաշտ հայ ընտանիք է, որտեղ կարգավորված են նաև հարս-սկեսուր հարաբերությունները: Լուիզան ակնածանքով է ներկայացնում սկեսրոջը՝ Լուսին տատիկին, որն առանձնահատուկ ջերմությամբ է վերաբերվում թոռնիկներին: Ակամայից սկսվում է հակադրությունը. տատիկից սպասվելիք միակ գուրգուրանքը Քեթը ստացել էր մի անծանոթ կնոջից, երբ ինքը դեռ չորս կամ հինգ տարեկան էր, երբ ծնողները խաղատուն գնալու համար, իրեն պահ տվեցին մոթելի տարեց տիրուհուն՝ Մարգրեթին: Բացի այդ, ի տարբերություն այն կանանց, ովքեր չունեն ոչ մի ինքնուրույնություն և իրենց ամուսինների կցորդն են՝ Լուիզան փորձել է ֆինանսական անկախություն ստեղծել. հիմնել է մի փոքրիկ ծաղկի խանութ, մի հատ էլ օժանելիքի խանութ: Լուիզան խոստովանում է, որ երբեք չի դավաձանել ամուսնուն և մտածում է միայն երեխաների կրթության և ապագայի մասին: Զգացմունքների ազատություն, անկեղծություն, ջերմություն, հարգանք մեծի նկատմամբ՝ այս հատկանիշները անմիջապես գրավում են Քեթի ուշադրությունը:

Վեպում երբեմն փորձ է արվում բարոյականության խնդիրները իմաստավորել պրոֆեսոր Ֆոքսի կերպարի միջոցով, որի կարծիքով՝ սիրո զգացումը իր տեղը ընդմիջտ գիջել է կրքին՝ «Կանացի այդ թանկարժեք մարմինը հիմա բոլոր անկյուններից մեզ վրա է նետվում, չի սպասում, որ մենք նետվենք իր ոտների առաջ» (էջ 89): Ապա մեջբերելով Սարոյանի հերոսուհիներին, որոնք նույնպես ապրում են Ամերիկայում՝ նկատում է, որ Սարոյանի գործերում չկան բացասական հերոսներ. նրանք բոլորը գթասիրտ են, ազնիվ, այնպիսին, ինչպիսին պետք է լինի մարդը: Նրա կանայք հավատարիմ են, սիրող, սպասող (էջ 114): Ֆոքսի կարծիքով՝ Քեթի մոտ հեշտ է ստացվում «սիրով զբաղվել» արտահայտությունը, մինչդեռ «սիրով զբաղվելը» և «սիրելը» բոլորովին տարբեր բաներ են: Սակայն վեպի ավարտը «ձոն» է սիրո ամենակարող ուժին՝ ազատամիտ և անկախ Քեթը, ամուսնանալով Հայկի՝ Նոյի ժառանգորդներից մեկի հետ՝ գալիս է նրա հայրենիք՝ Հայաստան, որտեղ «կյանքի երակ կա» և որտեղ «ժայռերից մեղր է հոսելու» (էջ 171-172):

Այսպես հյուսվում են տարբեր մարդկային ձակատագրեր՝ տարաբնույթ հանգամանքներում: Այիս Հովհաննիսյանի ուշադրության

կենտրոնում են կինը, ընտանիքը, սիրային ազատ կապերը, բնագիտության վերջին տվյալներով լուսաբանված մարդ արարածն՝ իր կրքերի, բնազդների, մղումների ապրումների մեջ: Կնոջ և տղամարդու փոխհարաբերությունների վեհ ու ազնիվ կերպի բացակայության գաղափարն այլևս դատապարտելի չէ Ալիս Հովհաննիսյանի հերոսների համար:

Ակնհայտ է, որ իրենց ժամանակակից համարող տղամարդ և կին գրողները հաճախ են ներկայացնում սեռական բաց, զգայապաշտական մանրամասներ՝ դրանցով փորձելով հետաքրքրություն արթնացնել իրեն նույնքան ժամանակակից համարող ընթերցողի մեջ՝ հասնելով ուղղակի ծայրահեղապաշտության: Այս քննադատություններին շատերն են ընդդիմանում՝ հիմնավորելով այն համոզմունքը, որ գրականությունը ժամանակակից պահանջներին համահունչ՝ իրական կյանքի վերարտադրություն է, հետևաբար, ինչպես սովորական մարդը չի կարող լիարժեք մարդ լինել՝ առանց սեռական կյանքի, այդպես էլ՝ գրականությունը չի կարող մարդկային կյանքը լիարժեք պատկերել՝ առանց սիրային տեսարանների, և հենց դրանով են բացատրվում գրականության մեջ պատկերված այդ տեսարանների բաց նկարագրությունները, սակայն, որոնք ոչ մի կապ չունեն վեհ սիրո արժևորման հետ: Ալիս Հովհաննիսյանը նույնպես չի խուսափում զգայապաշտական մանրամասնումներից՝ նա պատկերել է նաև լեսբիական ու հոմոսեքսուալիստական սիրո դրսևորումները, սակայն զգացմունքային լիցքը սեռական մերձեցման նկարագրությունը պահում է գեղագիտականի սահմաններում: Բաց նկարագրությունները Ալիս Հովհաննիսյանի արձակում միջոց են՝ աշխարհայացքային ինչ-ինչ առանձնահատկություններ գրականություն բերելու համար. այն առիթ է դառնում հասարակության փոխհարաբերությունները և մարդկային բնության տարատեսակ դրսևորումները վերլուծելու համար՝ բացահայտելով բնազդի չերևացող, թաքնված կամ քուն մտած կողմը, երևակայության հնարավորությունները՝ այս ամենի մեջ հոգեբանական, հոգեվերլուծական, ֆենոմենոլոգիական թափանցումների շերտերով:

Հոգեդինամիկ արտացոլումները, հոգեբանական պատկերները, հոգևոր-բարոյական արժեհամակարգերի հիերարխիան հայտնաբերվում են գեղագիտական-մտածական հղումների տիրույթում, և Ալիս Հովհաննիսյանը կենցաղային խնդիրներից աստիճանաբար անցում է կատարում դեպի լինելության փիլիսոփայական հարցադրումները:

Բանալի բառեր. Ալիս Հովհաննիսյան, ամերիկացի, կին, ընտանիք, արժեհամակարգ:

Резюме

Гаяне Егназарян

Женщины в прозе Алис Оганисян

В статье изучаются характерные черты американских женщин в романе "Круг замыкается " Алис Оганисян. Автор представляет философию мысли, действия, неудач и достижений женщин разных национальностей, проживающих в Америке.

Summary

Gayane Yeghiazaryan

The Women in Alice Hovhannisyan's Prose

The article is aimed to study the distinctive features of American women in the novel "The Circle is Closing" by Alice Hovhannisyan. The author represents the philosophy of thoughts, actions, failures and achievements of women of different nationalities living in America.